

Գրանցված է Արցախի Հանրապետության
արդարադատության նախարարությունում
«14» մայիսի 2018 թվական
Պետական գրանցման համար 1111832
Արցախի Հանրապետության
արդարադատության նախարար

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«27» ապրիլի 2018 թվական

N 141-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐԳԵԼԱՆՔ ԴՆԵԼԻՍ ԳՈՒՅՔԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ, ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԿԱՄ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐՆ ԱՆՀԱՅՏ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ, ԴՐԱՄԱՐԿՂՈՒՄ ԿԱՆԽԻԿ
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ, ԴՐԱՄԱՐԿՂՈՒՄ ԿԱՆԽԻԿ
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՇԱՐԺԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ, ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ
ՎԵՐԱՀՍԿՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԳԾՈՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ
ԸՆԴՈՒՆՎՈՂ ԵՐԱՇԽԻՔԻ ՁԵՎԸ ԵՎ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՈՒ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՌԸՆԹԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 10-Ի N 1-Ն ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
օրենքի 30-րդ հոդվածի 8-րդ, 29-րդ և 44-րդ մասերն ու «Իրավական ակտերի
մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Սահմանել՝

1) արգելանք դնելիս գույքի բացակայության, անբավարարության կամ հարկ
վճարողի գտնվելու վայրն անհայտ լինելու մասին արձանագրության օրինակելի ձևը՝
համաձայն N 1 հավելվածի.

2) դրամարկղում կանխիկ դրամական միջոցների գույքագրման
արձանագրության ձևը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) դրամարկղում կանխիկ դրամական միջոցների շարժի գույքագրման արձանագրության ձևը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով հարկային մարմնի կողմից ընդունվող երաշխիքի ձևը և լրացման կարգը՝ համաձայն N 4 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2015 թվականի մարտի 10-ի ««Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի համաձայն արգելանք դնելիս գույքի բացակայության, անբավարարության կամ հարկ վճարողի գտնվելու վայրն անհայտ լինելու մասին արձանագրության օրինակելի ձևը սահմանելու մասին» N 1-Ն հրամանը:

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Արձանագրությունը կազմող արգելանք իրականացնող պաշտոնատար անձինք՝

(պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը)

(պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը)

Հարկ վճարողի պաշտոնատար անձինք՝

(պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը)

(պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը)

(պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը)

Արձանագրության պատճենը հարկ վճարողի պաշտոնատար անձին հանձնելու
ամսաթիվը՝ _____ 20____թ.

Ստացա արձանագրության պատճենը _____

(պաշտոնատար անձի պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը)

Արձանագրված փաստերի վերաբերյալ
առարկություններ չունեմ _____

(պաշտոնատար անձի պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը)

Ունեմ առարկություններ _____

(պաշտոնատար անձի պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը)

Առարկությունները կցվում են (առդիր՝ _____ էջ)
կամ

(Արձանագրությունը կազմողների կողմից գրառում արձանագրությունը ստորագրելուց կամ արձանագրության պատճենը
ստանալուց հրաժարվելու կամ նշված գործողությունների անհնարինության մասին)

Կ. Տ.

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ

Հ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Ձև

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N _____

ԴՐԱՄԱՐԿՂՈՒՄ ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ

_____ 20__ թ.

(կազմման վայրը)

Համաձայն Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարի 20__ թ.
_____ N _____ հանձնարարագրի հարկ վճարողի դրամարկղում
ունեցած կանխիկ դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին որոշման
շրջանակներում կատարված գույքագրման արդյունքներով արձանագրվեց՝

(իրավաբանական անձի անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը), ՀՎՀՀ-ն)

(գույքագրման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը)

Հ/հ	Արգելանքի տակ գտնվող դրամական միջոցների արժույթը	Արգելանքի տակ գտնվող դրամական միջոցների արժեքը	Արգելանքի տակ գտնվող դրամական միջոցների քանակը	Այլ նշումներ

Հ/հ	Հարկ վճարողին ի պահ հանձնվող դրամական միջոցների արժույթը	Հարկ վճարողին ի պահ հանձնվող դրամական միջոցների արժեքը	Հարկ վճարողին ի պահ հանձնվող դրամական միջոցների քանակը	Այլ նշումներ

Գույքագրման ընթացքում դրամարկղային գործառնությունների կատարման դադարեցման ժամանակահատվածը _____-ից մինչև _____-ը:

Արգելանքի կիրառման ժամանակահատվածում հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների սահմանում դրամարկղ մուտքագրվող դրամական միջոցները գտնվել են արգելանքի տակ և ի պահ են ընդունվել՝

(հարկ վճարողի պաշտոնատար անձի պաշտոնը, անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

Գույքագրմանը մասնակցող անձանց տվյալներն ու ստորագրությունները:

(հարկ վճարողի պաշտոնատար անձի պաշտոնը, անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

(արգելանք կիրառելու որոշում ընդունած պաշտոնատար անձի պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը)

Արձանագրության պատճենը հարկ վճարողի պաշտոնատար անձին հանձնելու ամսաթիվը՝ _____ 20____թ.

Ստացա արձանագրության պատճենը _____

(պաշտոնատար անձի պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը)

Սույն արձանագրությունը հարկ վճարողի դրամարկղում առկա կանխիկ դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին որոշման անբաժանելի մասն է:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ**

Հ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Ձև

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N _____

ԴՐԱՄԱՐԿՂՈՒՄ ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՇԱՐԺԻ
ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ

_____ 20__ թ.

_____ (կազմման վայրը)

Համաձայն Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարի 20__ թ. _____ N _____ հանձնարարագրի հարկ վճարողի դրամարկղում ունեցած կանխիկ դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին որոշման շրջանակներում կատարված գույքագրման արդյունքներով արձանագրվեց՝

_____ (իրավաբանական անձի անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը), ՀՎՀՀ-ն)

_____ (գույքագրման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը)

Հ/հ	Մուտքագրված դրամական միջոցների արժեքը	Մուտքագրված դրամական միջոցների աղբյուրը	Ելքագրված դրամական միջոցների արժեքը	Ելքագրված դրամական միջոցների ծախսման ուղղությունները	Այլ նշումներ

Հ/հ	Հարկ վճարողին ի պահ հանձնվող դրամական միջոցների արժույթը	Հարկ վճարողին ի պահ հանձնվող դրամական միջոցների արժեքը	Հարկ վճարողին ի պահ հանձնվող դրամական միջոցների քանակը	Այլ նշումներ

Գույքագրման ընթացքում դրամարկղային գործառնությունների կատարման դադարեցման ժամանակահատվածը _____-ից մինչև _____-ը:

Արգելանքի կիրառման ժամանակահատվածում հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների սահմանում դրամարկղ մուտքագրվող դրամական միջոցները գտնվել են արգելանքի տակ և ի պահ են ընդունվել՝

(հարկ վճարողի պաշտոնատար անձի պաշտոնը, անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

Գույքագրմանը մասնակցող անձանց տվյալներն ու ստորագրությունները:

(հարկ վճարողի պաշտոնատար անձի պաշտոնը, անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

(արգելանք կիրառելու որոշում ընդունած պաշտոնատար անձի պաշտոնը, անունը, ազգանունը,

ստորագրությունը)

Արձանագրության պատճենը հարկ վճարողի պաշտոնատար անձին հանձնելու ամսաթիվը՝ _____ 20____թ.

Ստացա արձանագրության պատճենը _____

(պաշտոնատար անձի պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը)

Սույն արձանագրությունը հարկ վճարողի դրամարկղում առկա կանխիկ դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին որոշման անբաժանելի մասն է:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Ձև

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԱՇԽԻՔ N-----

**ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱՀՍԿՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԳԾՈՎ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ
ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎՈՂ**

_____ 20__ թ.

(տրման վայրը)

1. Սույն երաշխիքը հանդիսանում է հարկ վճարող՝ _____-ի՝
(իրավաբանական անձի անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը), ՀՎՀՀ-ն)
Արցախի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ունեցած
_____ ՀՀ դրամ գումարի
չափով հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով
պարտավորությունների (այսուհետ՝ հարկային պարտավորություն) կատարման
ապահովման միջոց:
2. Երաշխիքը տրված է՝ _____-ի
(բանկի, վարկային կազմակերպության կամ ապահովագրական ընկերության անվանումը)
կողմից (այսուհետ՝ երաշխիք տված անձ):
3. Երաշխիք տված անձի լիցենզիայի համարն է՝ _____,
գործողության ժամկետն է՝ _____:
4. Երաշխիքով ապահովված հարկային պարտավորությունների կատարման
համար երաշխիք տված անձի մոտ դրամական միջոցների առկայության փաստը
հավաստող հանգամանքներն են՝ _____:
5. Երաշխիքի գործողության ժամկետը _____ է:
6. Երաշխիք տված անձը երաշխիքով հարկային մարմնի առջև
պարտավորվում է կատարել հարկ վճարողի հարկային պարտավորությունները, եթե
վերջինս Արցախի Հանրապետության հարկային օրենսդրությամբ սահմանված
կարգով և երաշխիքով սահմանված ժամկետում չի կատարել իր հարկային
պարտավորությունները՝ հարկային մարմնի կողմից երաշխիք տված անձին
այդպիսի գրավոր պահանջ ներկայացնելու դեպքում:
7. Երաշխիքով հարկային պարտավորությունների կատարման ժամկետը
սահմանվում է մինչև _____ ժամկետով:
8. Երաշխիքը չի կարող հետ կանչվել երաշխիք տված անձի կողմից:
9. Երաշխիքը տրվում է և հարկային մարմին է ներկայացվում երկու օրինակից:
10. Հարկ վճարողի կողմից Արցախի Հանրապետության պետական բյուջեի
նկատմամբ ունեցած հարկային պարտավորությունները պետք է մարվեն սույն

Երաշխիքը հարկային մարմնի կողմից ընդունվելու օրվանից հետո _____ ժամկետում:

11. Երաշխիքով ապահովված հարկային պարտավորությունները հարկ վճարողի կողմից չկատարվելու դեպքում՝ հարկային մարմինը ձեռք է բերում Երաշխիք տված անձից հարկային պարտավորությունների կատարում պահանջելու անվիճելի իրավունք:

12. Հարկ վճարողի կողմից Երաշխիքի 10-րդ կետով սահմանված ժամկետում Երաշխիքով ապահովված հարկային պարտավորությունների չկատարման կամ մասնակի կատարման դեպքում հարկային մարմինը Երաշխիքով սահմանված հարկային պարտավորությունների կատարման վերջնաժամկետի ավարտից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, Երաշխիք տված անձին ներկայացնում է գրավոր պահանջ՝ Երաշխիքով ապահովված հարկային պարտավորությունների կատարման համար:

13. Երաշխիք տված անձի կողմից Երաշխիքով ապահովված՝ պարտապան հարկ վճարողի կողմից չկատարված հարկային պարտավորությունները ենթակա են կատարման այդպիսի պահանջը հարկային մարմնից ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

14. Երաշխիք տված անձի կողմից Երաշխիքի 13-րդ կետում նշված ժամկետում իր պարտավորությունների չկատարման կամ մասնակի կատարման դեպքում հարկային մարմինը Երաշխիք տված անձի նկատմամբ կարող է կիրառել Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հարկային պարտավորությունների հարկադիր կատարման ընթացակարգերը:

Երաշխիք տված անձի ղեկավար՝ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը
Կ.Տ.

Հարկ վճարողի պաշտոնատար անձի՝ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը
Կ.Տ.

Երաշխիքը հարկային մարմնի կողմից ընդունվել է _____ 20____թ.:

Երաշխիքի ընդունումը մերժվել է հարկային մարմնի կողմից _____
20____թ., որի համար հիմք են համարվել հետևյալ պատճառները.
_____:

Երաշխիքի մեկ օրինակը Երաշխիքը տված անձին ուղարկելու ամսաթիվը՝ _____
20____թ.:

**ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱՀՍԿԱՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԳԾՈՎ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ
ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎՈՂ ԵՐԱՇԽԻՔԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

1. Հարկային պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով հարկային մարմնի կողմից ընդունվող երաշխիքի ձևը (այսուհետ՝ Երաշխիք) լրացվում և ներկայացվում է «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 30-րդ հոդվածին համապատասխան:

2. Երաշխիքի 1-ին կետում լրացվում է իրավաբանական անձի անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը), հարկ վճարողի հաշվառման համարը և Արցախի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ունեցած հարկային պարտավորությունների չափը:

3. Երաշխիքի 2-րդ կետում լրացվում է բանկի, վարկային կազմակերպության կամ ապահովագրական ընկերության լրիվ անվանումը:

4. Երաշխիքի 3-րդ կետում լրացվում է երաշխիք տված անձի լիցենզիայի համարը և գործողության ժամկետը:

5. Երաշխիքի 4-րդ կետում լրացվում են այն փաստերը (գումարի չափը), որոնք հավաստում են երաշխիք տված անձի մոտ դրամական միջոցների առկայությունը:

6. Երաշխիքի 5-րդ կետում լրացվում է երաշխիքի գործողության ժամկետը՝ մինչև ինն ամիս որևէ ժամկետով:

7. Երաշխիքի 7-րդ կետում լրացվում է երաշխիքով հարկային պարտավորությունների կատարման ժամկետը՝ մինչև ինն ամիս որևէ ժամկետով:

8. Երաշխիքի 10-րդ կետում լրացվում է հարկ վճարողի կողմից Արցախի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ունեցած հարկային պարտավորությունների մարման ժամկետը՝ մինչև ինն ամիս որևէ ժամկետով:

9. Երաշխիքի 14-րդ կետում լրացվում է երաշխիք տված անձի գործադիր մարմնի ղեկավարի և հարկ վճարողի պաշտոնատար անձի ստորագրությունը, անունը, ազգանունը, հարկային մարմնի կողմից երաշխիքի ընդունման և մերժման ամիսը, ամսաթիվը, տարեթիվը, մերժման հիմքերը և երաշխիք տված անձին երաշխիքի օրինակի ուղարկման ամիսը, ամսաթիվը, տարեթիվը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ